

ԼԵՈՆԱՄԵՐՉ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2012ԹՎԱՌԱՋԻ
ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«11»ՀՈՒՆԻՍԻ 2012թ.

գ. Լեռնամերձ

Հարգելի Լեռնամերձ համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2012թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին : Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին : Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատարվել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ :

Համայնքում 2012թվականի1-ի կիսամյակում հավաքագրվել է ընդհամենը 627,8 հազար դրամ գումար , որը կազմում է 1-ին կիսամյակի կատարողականի 75,2 % -ը որից

ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 401,7 հազար դրամ

բ/ Գույքահարկ հավաքագրվել է 140,6 հազար դրամ

գ/ վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 85,5 հազար դրամ

դ/ Այլ, ոչ հարկային եկամուտ _ _ _ _ հազար դրամ

ե/ պատվիրակված չիազդրություն _ _ _ _ հազար դրամ

զ/ Պետության կողմից դոտացյա 3023,5 հազար դրամ

Համայնքում սեփական եկամուտների % -ը կազմում է 75.2 % որը այբան էլ վատ ցուցանիչ չէ, բայց ես կարծում եմ, որ պետք է աշխատանքներ կատարվի , որպիսի հավաքագրումը հասցվի 100% -ի որպիսի բյուջեով նախատեսված ծախսերը կատարվեն ժամանակին և որպիսի տարեկան կտրվացքով որոշակի պարտքեր չգոյանան : Աշխատավարձի գծով պարտք չունենք

Համայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները : Որպիսի համայնքի բնակիչները իրազեկ լինեն գյուղապետարանի աշխատանքներից, համայնքում տեղադրվել է թվով 2 ցուցատախտակներ:

2.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար : Հաշվետու

ժամանակաշրջանում առտակարք պատահար համաընթացում չի գրանցվել:

3.Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Խոսքս վերաբերվում է նոր բնակարաններ կառուցողներին, խնդրում եմ շինություն կառուցելու թույլտվություն ստանալ, վերջապես դա բխում է ձեր իսկ շահերից: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության: Տեղեկացնում եմ Ձեզ որ ՀՀ

կառավարությունը մշակել է գյուղական վայրերում բնակարանների նախագծերի փաթեթ, որ անվճար տրվում է ցանկացողներին և նրա հետ միասին շինարարության թույլաթվություն:

4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերի նպատակաին նշանակության օկտագործումը վերահսկվում է գյուղապետարանի կողմից, Պահպանված են պատմամշակութային հողերը:

5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը: Համայնքի ներսում մոտ 1կմ միջհամայնքային ճանապարհը գտնվում է անմխիթար վիճակում: Գյուղի սպասարկման համար գնում է Էջմիածին Լեռնամերձ ավտոբուսային երթուղին՝ ժամը 1 անգամ շաբաթը ստով:

6. Առողջապահության բնագավառ

Համայնքում չկան վարակիչ հիվանդություններ: Բնակչությանը խնդրում եմ մաքուր պահել համայնքը, որը կարևոր գրավականն է առողջ ապրելակերպի:

ա/ բուժկետից օգտվել են՝ 305 բնակիչներ

բ/ տնային կանչեր 40

գ/ անվճար ուղեգրեր են տրամադրվել 11 այլ բուժ հիմնարկներում ստուգվելու համար

Բուժ կետի աշխատանքները համարում եմ բավարար, չկան բողոքներ:

7. Բնապահպանության և շրջակա միջավայրի ապահովման բնագավառ:

Գյուղապետարանը միջոցներ է առանձնացրել բնակչության կենցաղային աղբը հեռացնելու համար: Ամիսը 4 անգամ փողոց առ փողոց հավաքվում է աղբը և հեռացվում բնակավայրից:

Մշակված է բնակավայրի սահմտարական մաքրման սխեման և արվում է ամենինչ այն ամբողջությամբ ապահովելու համար:

8.Գյուղատնտեսության բնագավառ:

Գյուղապետարանը իր ունեցած հնարավորության սահմաններում անում է ամեն ինչ գյուղատնտեսության արդատության կազմակերպման և արտադրված մթերքների իրացմանը:

Գյուղապետարանը կազմակերպել է մարզպետարանի կողմից հատկացված 13 տոնա ազոտական պարատանյութը բաժանվել է համայնքի բնակչությանը ըստ ցանկության: Գյուղին հատկացված դիզելային վառելանյութի պահանջակ չի եղել:

Ձեռնարկվում են միջոցներ գյուղ տեխնիկայի ձեռք բերման ուղղությամբ:

Գյուղի կանաչապատման և տնամերձ հողամասներում տնկելու համար ձեռք է բերվել 400 տնկանյութ և բաժանվել ցանկացողներին:

Բարեգործների կողմից՝ գյուղապետարանի ջանքերով կազմակերպվել է գյուղի փողոցների լուսավորությունը:

Գյուղապետարանը 8-12տարեկան երեխաների հանգիստը հունիսի 29-ից 8 օրով կազմակերպել է Հանքավանի ճամբարում:



[Handwritten signature]
Վ. Սիրզոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՎԱՅՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

- 1.Համայնքի ներսում մոտ 1 կմ միջհամայնքային ճանապարհի կառուցապատում
- 2.Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
3. Համայնքի գազաֆիկացում
- 4.Փոստի շենքի բացակայություն
- 5.Բուժկետի կառուցում



[Handwritten signature]
Վ. Սիրզոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՂՎԱԾՔ

2012թվականի հուլիսի 11-ին ժամը 15-00-ին տողի ունեցավ Լեոնամերձ համայնքի անդամների ընդանուր ժողով՝ գյուղապետարանի շենքում:

Ժողովին ներկա էր 22 Արմավիրի մարզպետարանի բնապահպանության բաժնի պետ Ս.Բաղդասարյանը:

Ժողովին մասնակցում էին 105 մարդ:

Ժողովի նախագահությամբ՝ Վ. Միրզոյան
Քարտուղարությամբ՝ Հ. Սիմոնյան

Օրակարգ- Լեոնամերձ համայնքի ղեկավարի 2012թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

ԶԵԿՈՒՑՈՂ՝ Վ. ՄԻՐԶՈՑԱՆ

Արտահայտվեցին- Ազատ Բարսեղյանը , Աշոտ Ներսիսյանը և Սահակ Միրզոյանը:

Ժողովում արտահայտվեցին գյուղում հուզող հարցեր, խնդիրների լուծում ըստ բնագավառների:

- 1.Ֆինանսների բնագավառ
- 2.Հասարակական կարգի պահպանում
- 3.Քաղաքաշինության բնագավառ
- 4.Հող օգտագործման բնագավառ
- 5.Տրանսպորտի բնագավառ
- 6.Առողջապահության բնագավառ
- 7.Բնապահպանության և շրջակա միջավայրի ապահովման բնագավառ
- 8.Գյուղատնտեսության բնագավառ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1. Համայնքի ներսում մոտ 1-կմ մինջհամայնքայի ճանապարհի կառուցապատում
- 2.Գյուղտեղնիկայի ձեռքբերում
- 3.Համայնքի գազաֆիկացում
- 4.Փոստի շենքի բացակայություն
- 5.Բուժկետի կառուցում

Նախագահ՝ Վ.Միրզոյան
Քարտուղարությամբ՝ Հ. Սիմոնյան

Իսկականի հետ ճիշտ է: